

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ  
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
2. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	3
3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՍԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊԶԵՐ .....	4
4. ՇԱՀԵՐԻ ԲԱՅԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲԵ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	5
5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ .....	5
6. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ .....	6
7. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....	7
8. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԿԱՏԱՍԲԵ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ .....	8

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը մշակված է ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորող իրավական ակտերի, Բանկի ներքին ընթացակարգերի և միջազգային պրակտիկայում կիրառվող ստանդարտներին համապատասխան:

1.2. Սույն կարգն ուղղված է ապահովելու՝

- Բանկի հաճախորդների շահերի գերակայության ապահովումը Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց անձնական շահերի նկատմամբ:
- Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը:
- Շուկայի չարաշահումներից խուսափումը և ազնիվ ու բարեխիղճ առևտրի սկզբունքների հետևումը:
- Բանկի պարտավորությունները՝ գործելու ազնիվ և անկողմնակալ վերջինիս հաճախորդների և գործընկերների հետ:

## 2. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.3. Ստորև բերված հասկացությունները սույն Կարգում օգտագործվում են հետևյալ իմաստով՝

**Բանկ** – “ՎՏԲ-Հայաստան Բանկ” Փակ Բաժնետիրական Ընկերություն:

**Հաճախորդ** է համարվում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Բանկն ունի գործող ներդրումային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:

**Արժեթուղթ** է համարվում ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով որպես արժեթուղթ սահմանվող ցանկացած գույքային իրավունք:

**Շահերի բախում** է համարվում Բանկի, որպես արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձի, իր աշխատակիցների և հաճախորդների միջև գույքային և այլ շահերի հակասություն, որի արդյունքում Բանկի և/կամ իր աշխատակիցների գործողությունը/անգործությունը գույքային կամ այլ տիպի վնաս է պատճառում հաճախորդին, կամ աշխատակիցների գործողությունները վնաս են հասցնում Բանկին:

**Աշխատակից** է համարվում Բանկի հետ աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա Բանկի անունից կամ դրա կազմում հանդես եկող անձ, այդ թվում՝ ղեկավար անձ:

### 3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՍԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊԵՐ

3.1. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Շահերի բախման հնարավոր դեպքերը հետևյալն են՝

- 3.1.1. Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայական գնից տարբերվող գներով՝ ի օգուտ Բանկի կամ դրա աշխատակցի, սակայն ի վնաս Հաճախորդի:
- 3.1.2. Հաճախորդի միջոցների ներդրումը Բանկի կամ Բանկի հետ փոխկապակցված անձանց կողմից թողարկված արժեթղթերում:
- 3.1.3. Հաճախորդին պատկանող արժեթղթերով Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ փոխկապակցված անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ խախտելով Հաճախորդի ներդրումային իրավունքները:
- 3.1.4. Հաճախորդի վրա ճնշման գործադրում կամ այնպիսի խորհրդատվության տրամադրում, որի արդյունքում Հաճախորդի գործարքները կամ գործողությունները կբխեն հիմնականում կամ բացառապես Բանկի, Բանկի աշխատակիցների կամ այլ փոխկապակցված անձանց շահերից՝ ի վնաս հաճախորդի, կամ որոնց արդյունքում Բանկի շահերը կգերադասվեն Հաճախորդի շահերից:
- 3.1.5. Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ անօգուտ գործարքների իրականացում՝ միջնորդավճարները կամ այլ բանկին հասանելի վճարները ավելացնելու նպատակով:
- 3.1.6. Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը՝ նպատակ ունենալով օգուտ ստանալ Բանկի, Բանկի աշխատակիցների կամ այլ փոխկապակցված անձանց համար, ի վնաս Հաճախորդի:
- 3.1.7. Արժեթղթերով այնպիսի գործարքների կատարումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ հաճախորդի և ի վնաս մեկ այլ հաճախորդի:
- 3.1.8. Ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված գործողություններ իրականացնելիս Բանկի և աշխատակիցների միջև շահերի բախումը:
- 3.1.9. Բանկում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված Հաճախորդի միջոցների կանխամտածված պահում՝ Բանկի սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով:
- 3.1.10. Էական նշանակություն ունեցող և արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ Հաճախորդի կողմից ստացվող ծառայողական

տեղեկատվության օգտագործում ի շահ Բանկի, Բանկի աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված անձանց:

3.2. Նշված հնարավոր շահերի բախումների ցուցակը սպառիչ և ամբողջական չէ, և սույն ակտը տարածվում է նաև շահերի բախման այլ դեպքերի վրա:

#### **4. ՇԱՀԵՐԻ ԲԱՑԱՈՒՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏԱԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

4.1. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Բանկի համապատասխան իրավասություններ ունեցող աշխատակիցները պարտավոր են՝

4.1.1. Պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին կանոնակարգերի պահանջները:

4.1.2. Վեր դասել Բանկի և Բանկի հաճախորդների շահերը սեփականից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի և/կամ Բանկի շահերի վրա:

4.1.3. Ապահովել ներդրողների (հաճախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը:

4.1.4. Իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ընթացակարգերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Բանկը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

#### **5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

5.1. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է անկողմնակալության անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Հաճախորդների պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից:

5.2. Բանկի աշխատակիցները հաճախորդի միջոցներով գործարքներ իրականացնելիս պարտավոր են պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական գործունեության էթիկայի կանոնները, մասնավորապես՝ խուսափել իրենց պաշտոնական գործառնությունների իրականացման ընթացքում կամ դրանց հետ կապված հոգուտ իրենց այնպիսի գործողություններ իրականացնելուց, գործարքներ կնքելուց, որոնց արդյունքում կտուժեն Բանկի կամ դրա հաճախորդների շահերը:

5.3. Բանկի աշխատակիցները գործարքներ իրականացնելիս պարտավոր են տեղեկացնել հաճախորդին հնարավոր շահերի բախումների մասին:

5.4. Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան հաճախորդի հավասարազոր պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայություն մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:

5.5. Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը պետք է գործեն բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից և պետք է.

5.5.1. համոզվեն, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման

5.5.2. հավասարազոր պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում Հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

5.6. Ընդհանուր առմամբ, ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Բանկը կարող է համախմբել իր Հաճախորդի պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ Հաճախորդի պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝

5.6.1. որևէ Հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա պատվերը կատարվեր առանձին

5.6.2. ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդների շահերից:

5.7. Եթե ներդրումային ծառայություն մատուցող անձը իր Հաճախորդի պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին:

## **6. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

6.1. Բանկը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի Հաճախորդի պատվերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոններ:

6.2. Ֆիդուցիար պարտականությունները կատարելու նպատակով Բանկը պետք է ձեռնարկի բոլոր այն խելամիտ քայլերը, որոնք կապահովեն հնարավոր լավագույն արդյունք:

6.3. Բանկը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով պատվերը կատարելու համար, հետևելով հաճախորդի կողմից տրված բոլոր առանձնահատուկ ցուցումներին:

6.4. Երբ հաճախորդի պատվերը կատարելու համար Բանկը ձեռնարկում է քայլեր լավագույն պայմանները որոշելու համար և փորձում է ընտրություն կատարել գործարքների կնքման տարբեր վայրերի միջև, ապա վերջինս պետք է ընտրի գործարքների կնքման այն վայրը, որի միջոցով պատվերի կատարման դեպքում հաճախորդի համախառն ծախսերը (արժեթղթերի գինը և գործարքի կնքման հետ կապված այլ ծախսերը) կլինեն նվազագույնը:

## **7. ԸԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

7.1. Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում շահերի բախումների հնարավորությունները կանխարգելելու նպատակով Բանկը կիրառում է հետևյալ միջոցառումները՝

7.1.1. Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ընթացակարգերով սահմանված կարգով: Բանկն իրավասու է չկատարել Հաճախորդի պատվերը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

7.1.2. Բանկի աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկ ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին

7.1.3. Բանկի հաճախորդների և աշխատակիցների միջև գործարքները իրականացվում են միայն համապատասխան հանձնարարականի առկայության դեպքում՝ պատշաճ ձևակերպված պատվերի և/կամ ներդրումային որոշման հիման վրա:

7.1.4. Բանկը հստակ սահմանում և կանոնակարգում է այն սահմանափակումները, որոնք ենթակա են կիրառման իր ստորաբաժանումների միջև ծառայողական տեղեկատվության փոխանակման գործառնությունների նկատմամբ: Այդ տեղեկատվության փոխանակումը սահմանվում է Բանկի ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակումը կանոնակարգող ներքին իրավական ակտով:

- 7.1.5. Ծառայողական տեղեկատվության տիրապետող Բանկի աշխատակցին արգելվում է գործարք կատարել Բանկի կամ իր շահերից ելնելով, քանի դեռ չի իրականացվել հաճախորդի համապատասխան հանձնարականը, կամ իր շահերից ելնելով՝ քանի դեռ Բանկը դիվիզային գործառնության արդյունքում չի իրականացրել նախատեսված գործարքը: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ նման տիպի գործարքների իրականացումը անհրաժեշտ է տվյալ հաճախորդի հանձնարարականը կատարելու առավել բարենպաստ պայմաններ ապահովելու համար:
- 7.1.6. Հաճախորդի պատվերի կատարման մասին հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություն այն փաստի մասին, որ Հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել Բանկը, Բանկի աշխատակիցները կամ այլ փոխկապակցված անձինք կամ Բանկի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի բացահայտ լինելը մյուսի համար:
- 7.1.7. Բանկի աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որը վերջնական նպատակ է հետապնդում Բանկի շահերին գործարքներ կնքելու համար բարենպաստ պայմանների ստեղծում, կամ որը հակասում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին:

## **8. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ և ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԵՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ**

- 8.1. Արժեթղթերով գործարքների հաշվառումը և հաշվետվությունները իրականացվում են ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.2. Բանկի աշխատակիցները, որոնք ներգրավված են արժեթղթերի շուկայում գործարքների իրականացման, ձևակերպման և հաշվառման գործում իրականացնում են արժեթղթերի գործարքների ձևակերպումը և հաշվառումը ամեն առանձին գործարքի համար, այնպես որ հաճախորդին տրամադրվի ամբողջական տեղեկատվություն գործարքի իրականացման մասին հնարավորին սեղմ և օրենքով սահմանված ժամկետներում:
- 8.3. Եթե Բանկը կատարել է Հաճախորդի պատվերը (բացառությամբ արժեթղթերի փաթեթի կառավարման), ապա նա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով Հաճախորդին տրամադրի պատվերի կատարման մասին հաշվետվություն:



8.4. Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ Հաճախորդներին վերջիններիս արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության կազմը սահմանվում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայամնագրով, բայց չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության կազմից: